«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀՈԲԵԼՅԱՆԴ ԲԱՐԻ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որ թերթը միշտ պատվով է կատարել իր առաքելությունը, օբյեկտիվ ու սպառիչ տեղեկատվություն փոխանցել Վրաստանի հայազգի քաղաքացիներին, նրանց մոբիլիզացրել վրաց պետականության շինարարության գործին, ակտիվորեն ներգվրավել երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Ժամանակին, երբ գլխավորում էի «Նորչի լենինելի» (ներկայումս՝ «Ներգի») թերթի խմբագրությունը, ինձ բախտ վիճակվեց աշխատել «Վրաստանի» խմբագրության հարեւանությամբ, նույն շենքի, նույն մասնաճյուղում: Ոչ միայն խմբագրությունների հարեւանությամբ, այլեւ անձնական բարեկամական հարաբերությունների հաստատմամբ մեր երկու թերթերը սերտորեն համագործակցում էին տասնամյակներ շարունակ, հաղթահարելով քաղաքական ելեւէջների արդյունքում ծագող բոլոր արգելքներն ու խոչընդոտները: Ի տարբերություն շատ պարբերականների, դուք կարողացաք հանձնել ժամանակի քննությունը եւ հավատարմորեն ծառայել գլխավոր նպատակին՝ հաստատուն կամուրջ դառնալով վրաց եւ հայ ժողովուրդների, Վրաստանի եւ Հայաստանի միջեւ:

Ակնհայտ է, որ թերթի գործունեության կողմնորոշման անշեղությունը մեծապես կախված է խմբագրի դիրքորոշումից, եւ այդ հարցում իմ վաղեմի բարեկամ Վան Բայբուրթյանը լրիվորեն արդարացրեց հմուտ քաղաքագետի ու փորձառու լրագրողի իր համբավը:

Թանկագին բարեկամներ, կրկին անգամ շնորհավորում եմ «Վրաստանի» հարյուրամյա հոբելյանի առիթով, թերթին մաղթում երկարակեցություն, իսկ աշխատակիցներին՝ երջանկություն եւ ստեղծագործական հաջողություններ:

ՄԱՐԻՆԱ ԹԵՔԹՈՒՄԱՆԻՉԵ
Վրաստանի լրագրողների ստեղծագործական միության համանախագահ

ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ԲԱՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Տանը բոլորս ձգտում ենք առաջինը լրացնել թերթում զետեղված խաչբառը: Հիշում եմ, երբ նոր էի սովորում տառերը, թերթի էջերում փնտրում էի սովորածս տառերը, հետո սկսեցի կարդալ, բաց չէի թողնում ոչ մի նյութ: «Վրաստանն» ինձ կարդալ սովորեցրեց:

Ու որպես թերթի մշտական ընթերցող հիմա ի սրտե շնորհավորում եմ «Վրաստանիս» մեկդարյա հոբելյանը: Շնորհավորում եմ պարոն Վանին, խմբագրության բոլոր աշխատակիցներին: Ցանկանում եմ նրանց ջանք ու եռանդ այս անձնվեր գործը պատվով կատարելու հարցում:

Կարծում եմ, «Վրաստան» թերթը «Աստվածաշնչի» հետ մեկտեղ, վիրահայերիս սեղանին պետք է լինի, քանզի այն նույնպես հայապահպանության կարեւորագույն գործոնն է:

Կրկին ու կրկին շնորհավոր հարազատ «Վրաստանիս»: Երկարակեցություն քեզ:

Արմենուհի Պողոսյան
Նինոծմինդայի մունիցիպալիտետ
գյուղ Փոքր Խանչալի

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՎԱՀԱՆ ԱՐՈՅԱՆ. «ԱՇԽԱՏՈՒԺԸ ՏԵՂՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ ՏԱՐԲԵՐ, ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ»

Անցյալ տարի, հոկտեմբերին, երբ Նինոծմինդայի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանն ընտրվեց Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, թափուր մնացած պաշտոնին սակրեբուլոն երաշխավորեց իր ակտիվ անդամներից մեկին՝ խոստումնալից երիտասարդ, 34-ամյա Վահան Արոյանին:

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Նինոծմինդայի մունիցիպալիտետի «Արշալույս» թերթի խմբագիր Լուսինե Վարդանյանի հարցազրույցը մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանի հետ:

- Ինչպե՞ս ընդունեցիք, երբ իմացաք, որ Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ ընտրվեցիք:

- Իմ կարծիքով, ցանկացած պաշտոն ստանձնելուց առաջ մարդ ունենում է հակասական զգացումներ: Ինձ համար սպասելի էր այն առումով, որ, գիտեք, այս ոլորտում որպես պատգամավորի արդեն ունեի փորձ, սակրեբուլոյի անդամ էի, իսկ երբ ընտրվեցի սակրեբուլոյի նախագահ, ուղղակի պատասխանատվությունն ու աշխատանքի ծավալը տասնապատիկ անգամ մեծացավ: Շատ ուրախ եմ, որ այն հույսը, հավատը, որը ձեւավորվել է վերջին տարիների ընթացքում, հիմա ես հնարավորություն ունեմ այդ ամենը կյանքի կոչելու:

- Ընթերցողները հետաքրքրվում է, ո՞վ է մասնագիտությամբ մեր սակրեբուլոյի նախագահը, եւ ո՞ր ոլորտներում է աշխատանքային գործունեություն ծավալել՝ մինչեւ այդ պատասխանատու պաշտոնին ստանձնելը:

- Մասնագիտությամբ իրավաբան եմ: Աշխատանքային գործունեությունս սկսել եմ Նինոծմինդայի կրթական ռեսուրսկենտրոնում՝ նախ որպես իրավաբան, ապա՝ իրավաբան-փորձագետ, այնուհետեւ՝ Ախալքալաքիի շրջանի դպրոցների իրավաբան-խորհրդատու: 2017 թվականից մտել եմ քաղաքականություն՝ ընտրվելով Նինոծմինդայի շրջանային սակրեբուլոյի անդամ:

- Կես տարուց ավելի է՝ զբաղեցնում եք այս պաշտոնը, արդեն պատկերացում ունեք, թե իրենից ինչ է ենթադրում սակրեբուլոյի նախագահի աշխատանքը: Բնականաբար, հասցրել եք ծանոթանալ նաեւ մունիցիպալիտետի խնդիրներին: Կարեւորագույններից մեկն էլ ջրամատակարարումն է, որի անկայուն գրաֆիկը բնակիչների մոտ դժգոհությունների տեղիք է տալիս: Սակրեբուլոյի նիստերից մեկի ժամանակ քննարկվեց քաղաքում ջրաչափերի տեղադրումը: Ե՞րբ են նախատեսվում այդ աշխատանքները եւ որքանո՞վ է իրատեսական, որ սա կլինի խնդրի լուծում:

- Անցնող ամիսների ընթացքում արդեն կյանքի ենք կոչել մի շարք տնտեսական, սոցիալական, մշակութային նախագծեր: Նշեմ, որ տասնյակ գյուղերում ջրի եւ ծախսված էլեկտրաէներգիայի վճարներն իրենց վրա են վերցրել քաղաքապետարանի մունիցիպալ օրգանները: Այո, այսօր գերակա խնդիր է մեր քաղաքը շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովելը: Բայց ճշմարտություն է, որ պատճառներից մեկը խմելու ջրի շռայլ օգտագործումն է թե՛ ոռոգման նպատակներով եւ թե՛ մեքենաների լվացման կետերի, այլ գործարանների կողմից: Խնդիրը բազմիցս սակրեբուլոն քննարկել է նահանգային ջրային տնտեսության պետի մասնակցությամբ, սակայն դեռ, ցավոք, անարդյունք: Ուստի եկել ենք այն եզրահանգման, որ հարցի միակ լուծումը ջրաչափերի տեղադրումն է: Հետագայի համար նախատեսել ենք նաեւ նոր ջրագծի անցկացում: Ներկայումս հանձնարարված է կազմել գրաֆիկ, որը կբխի բնակչության շահերից:

- Հաջորդ կարեւոր խնդիրը, երեւի, բնակչության զբաղվածությունն է: Արդեն կա՞ տեսլական խնդրի լուծման համար:

- Բնակչության զբաղվածության հարցի լուծումը երկրի կառավարության առաջնային խնդիրն է: Աշխատուժը տեղում օգտագործելու համար մշակում եւ իրագործում ենք տարբեր նախագծեր՝ փոքր եւ միջին գործարարությունը խրախուսելու, գյուղատնտեսական հումքի վերամշակման գործարաններ հիմնելու, պլանավորում ենք նաեւ մսամթերքի վերամշակման արտադրամասեր բացել, ինչը կլուծի նաեւ մսամթերքի իրացման խնդիրը:

- Մունիցիպալիտետի բնակչության կենսագործունեության ներկայիս պայմանները ու նրանց ընձեռված հնարավորությունները, Ձեր գնահատմամբ, բավարարո՞ւմ են արդի պահանջներին: Ի՞նչ խոչընդոտներ կան եւ, Ձեր կողմից, ի՞նչ է ձեռնարկվում դրանց հաղթահարման ուղղությամբ:

- Բնակչության կենսագործունեությունն, իհարկե, բարվոք վիճակում չէ: Համավարակի հետ պայմանավորված նախորդ տարի մեր աշխատունակ բնակչության ստվար մասը չմեկնեց արտագնա աշխատանքի եւ տեղում զբաղվեց անասնապահությամբ ու հողագործությամբ: Գյուղմթերքի արտադրման ծավալի ավելացման հետ առաջ եկավ գների եւ իրացման խնդիր: Ինչն էլ հանգեցրեց այս տարի կարտոֆիլի ցանքատարածությունների զգալի նվազեցման: Այժմ, կառավարության հետ մեկտեղ, աշխատում ենք տեղական ապրանքի իրացումն անխոչընդոտ ապահովելու ուղղությամբ:

Ակնհայտ է, որ մեր ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով, միայնակ եւ սահմանափակ կարողություններով անձանց հոգսերը, վերջիններիս հասարակության մեջ ինտեգրելուն ուղղված միջոցառումները: Աչքաթող չի արված նաեւ առողջապահության ոլորտը: Մեր ջանքերով շրջանում բացվեց COVID-կենտրոն, որը նպաստում է կորոնավիրուսով հիվանդների օպերատիվ բուժմանը:

Մեծ ուշադրություն է դարձվում դպրոցների շինարարությանը: Այս պահի դրությամբ հիմնանորոգվում են քաղաքի թիվ 1 հայկական, Ղաուրմայի եւ Մեծ Արագյալի դպրոցները: Շուտով շահագործման կհանձնվի Օրլովկայի դպրոցի նոր շենքը: Ընթացքի մեջ են մի շարք համայնքների «Մշակույթի տան» վերանորոգման աշխատանքները:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՑՈՒՑԱՍՐԱՀ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԲԱՑՎԵՑ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՑՈՒՑԱՍՐԱՀԸ

Օգոստոսի 2-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղում վերակառուցումից հետո բացվեց աշխարհում հայտնի քնարերգու, հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանի տուն-թանգարանին կից վերանորոգված, եվրոպական մակարդակի գերժամանակակից ցուցասրահը, եռաշերտ ցուցադրությամբ եւ նորարարական լուծումներով:

Անի Մոսոյանը եւ Սոս Սահակյանը

Արայիկ Խզմալյանը

Սմբատ Կյուրեղյանը

Արամ Անանյանը եւ Կարո Վարդանյանը

Վիրահայոց Թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը

Միջոցառմանը ելույթ ունեցան Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանը, ՀԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սմբատ Կյուրեղյանը, Հայ առաքելական ուղղափառ եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, Երեւանի Հովհաննես Թումանյանի պետական թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Երեւանցի հայտնի բանաստեղծ Աբգար Ափինյանը, Գանձայի Վահան Տերյանի տուն-թանգարանի տնօրեն Վաղարշակ Թանգամյանը, «Միասին» հասարակական կազմակերպության ղեկավար Լեւոն Չիդիլյանը...

Միջոցառմանը ներկա էին Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, Նինոծմինդայի սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը, «Արմենպրեսի» գործակալության տնօրեն Արամ Անանյանը, Երեւանի Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը, Վահան Տերյանի ստեղծագործությունների սիրահարներ մոտակա շրջաններից, Թբիլիսիից, Երեւանից:

ՎԱՐԴՈՒՀԻ ԼՈՒՍԻՆՅԱՆ
Մեր հատուկ թղթակից
Գանձա

Լուսանկարները՝ Տաթեւ Դուրյանի «Արմենպրես»

COVID - 19

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ 99,7 ՏՈԿՈՍԸ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՉԻ ԵՂԵԼ»

Օգոստոսի 6-ին, միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտից հետո, Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ Վրաստանում կորոնավիրուսից մահացածների 99,7 տոկոսը պատվաստված չի եղել եւ, որ պատվաստված անձանց մոտ վիրուսի տարածման մակարդակը ցածր է:

- Այս տարվա մահերի ընդհանուր թվի վերլուծություն է իրականացվել, եւ նրանց 99,7 տոկոսը, ցավոք, պատվաստած չի եղել: Վերլուծվել են նաեւ պատվաստված բնակչության վարակման դեպքերը, այն է՝ կրկնակի պատվաստվածների 0,3 տոկոսը եւ մեկ անգամ պատվաստվածների 0,9 տոկոսը: Պատվաստված 1000 մարդուց մեկը կարող է մահանալ, մինչդեռ 1000 չպատվաստվածներից մահանում է 15 մարդ,- ընդգծեց Ամիրան Գամղրելիձեն:

Իր հերթին, Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեն նշեց, որ այս փուլում Վրաստանում կորոնավիրուսով վարակվածների 80 տոկոսի մոտ վիրուսի դելտա շտամներն են, այդ թվում՝ կան նաեւ դելտա պլյուսի դեպքեր:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ

Վրաստանում շարունակվում են կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումները: Օգոստոսի 4-ի դրությամբ, Վրաստանում ընդհանուր հաշվով իրականացվել է 542 639 պատվաստում:

Ամբողջական պատվաստվել է (երկու դեղաբաժին) 171 908 մարդ:

Վրաստանում պատվաստման գործընթացը մեկնարկեց մարտի 15-ից՝ միայն բժշկական ոլորտի աշխատողների համար: Ավելի ուշ, պատվաստվողների խումբն ընդլայնվեց եւ պատվաստվել սկսեցին նաեւ 65 տարեկանից բարձր քաղաքացիները: Այժմ «AstraZeneca» տեսակի պատվաստանյութով պատվաստվելու համար կարող են գրանցվել 45 տարեկանից բարձր քաղաքացիները:

Վրաստանը հունիսին ստացավ 1մլն դեղաբաժին «Սինովակ» եւ «Սինոֆարմ» տեսակի պատվաստանյութեր, որոնցով կկարողանան պատվաստվել 18 տարեկանից բարձր քաղաքացիները: Հուլիսից Վրաստանում սկսվեց «Pfizer» տեսակի պատվաստանյութով պատվաստումները:

Ըստ Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի տվյալների, որպեսզի մինչեւ տարեվերջ պատվաստվի Վրաստանի չափահաս բնակչության 60 տոկոսը, անհրաժեշտ է 1 ամսում առնվազն մեկ մլն մարդ պատվաստել: Վրաստանում պատվաստումն ընթանում է կամավորական սկզբունքով:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է 202 ՄԻԼԻՈՆԻՆ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 201 735 321-ը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 280 912-ը: Ապաքինվել է 181 481 526 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **36 301 744** դեպք: Այստեղ մահացածների թիվը **631 879** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **31 856 757**-ի, մահացածներինը՝ **426 785**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **20 066 587**, մահացել՝ **560 801** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **6 379 904**, վարակի հետեւանքով մահացել՝ **162 509** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Արգենտինան, Կոլումբիան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **231 625**-ի, մահացածներինը՝ **4 636**-ի, ապաքինվածներինը՝ **220 825**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **348 074** մարդ: Վարակից մահացել է **5 043,** ապաքինվել՝ **333 913** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **440 353,** մահացել՝ **6016,** ապաքինվել՝ **395 505** մարդ:

*Օգոստոսի 6-ին կորոնավիրուսով վարակման **3 780** նոր դեպքերից **1 640-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 628, Իմերեթիում՝ 395, Քվեմո Քարթլիում՝ 170, Շիդա Քարթլիում՝ 172, Գուրիայում՝ 70, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 199, Կախեթիում՝ 299, Մցխեթա-Մթիանեթիում՝ 102, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 21, Սամցխե-Ջավախեթիում՝ 84:***

ՄԻ' ՀԱՎԱՏԱԾԵՔ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՆ, ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՎԱՍՏՎՈՒՄՆ Է

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՊԱՏՎԱՍՏՎԵՆՔ

Ամեն օր շփվում ենք բազմաթիվ մարդկանց հետ, եւ համավարակի պայմաններում մեծացել է COVID-19-ով վարակվելու ռիսկը, պատվաստվելով մենք պահպանում ենք մեր առողջությունը, հոգ տանում ընտանիքի անդամների եւ մեզ շրջապատող մարդկանց մասին:

Պատվաստումը կօգնի վերադառնալ կյանքի բնականոն ռիթմին եւ կատարել մեր սիրելի աշխատանքը:

Ներկայում տարածված «Դելտա» շտամն օժտված է բարձր վարակելիությամբ ինչպես երեխաների, այնպես էլ՝ մեծահասակների շրջանում: Այս փուլում երեխաներին պաշտպանելու միակ միջոցը մեծահասակների կրկնակի պատվաստումն է:

Վրաստանում կիրառում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կամ մարմինների կողմից խիստ կարգավորող, հավաստագրված պատվաստանյութեր «**Ֆայզերը», «Աստրազենեկան», «Սինոֆարմը» եւ «Սինովակը»:**

Վերոնշյալ պատվաստանյութերը որակի, անվտանգության եւ արդյունավետության երաշխիք են:

ՆԿԱՏԻ' ՈՒՆԵՑԵՔ

Պատվաստումն անհրաժեշտ է քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց համար:

Վիրուսի տարածման նվազեցումը չափազանց կարեւոր է տարեցների, քրոնիկ հիվանդություններ ունեցող բուժառուների եւ մյուս բարձր ռիսկային խմբերի ներկայացուցիչների համար, ինչպես նաեւ այն մարդկանց պաշտպանելու համար, ովքեր չեն կարող պատվաստվել:

Պատվաստումը խորհուրդ է տրվում նույնիսկ այն դեպքում, եթե դուք արդեն հիվանդացել եք COVID-19-ով: Պատվաստվել հնարավոր է վիրուսի հաստատումից 30 օր անց:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ ՊԵՏՔ Է ՁԵՌՆԱՐԿԵՆՔ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* Գրանցվել հնարավոր է զանգահարելով թեժ գծի հետեւյալ հեռախոսահամարներով՝ 1522 եւ 144 (3), զանգն անվճար է: 1522 թեժ գիծը ծառայություններ է մատուցում վրացերեն, հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն եւ անգլերեն:
* Պատվաստվել հնարավոր է, առանց նախնական գրանցման, այն բժշկական հաստատություններում, որոնք ներգրավված են համընդհանուր պատվաստումների գործընթացում:
* Ցանկալի պատվաստանյութի համար գրանցվել հնարավոր է հետեւյալ հարթակի միջոցով՝ www.booking.moh.gov.ge:

Նախքան պատվաստվելը ցանկացողն անցնում է բժշկի խորհրդատվություն եւ լրացնում առողջության վիճակը գնահատող հատուկ հարցաթերթիկ:

ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է, ԱՐԴՅՈՔ, ՎԱՐԱԿՎԵԼ ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Իմունիտետի մշակման համար անհրաժեշտ է ժամանակ: Իմունիտետը ձեւավորվում է պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը ստանալուց առնվազն երկու շաբաթ անց:

Հետազոտությունները ցույց են տվել, որ պատվաստված անձինք վարակվելու դեպքում, համեմատաբար, թեթեւ կամ ասիմպտոմատ կերպով են տանում COVID-19-ը, նվազում է ե'ւ մահվան ռիսկը, ե'ւ ուրիշներին վիրուսի փոխանցման դեպքերի թիվը:

ՀԻՇԵ'Ք

* Պատվաստման ծրագրի նպատակն է՝ փրկել կյանքը եւ կանխել հիվանդության ծանր բարդությունները:
* Պատվաստումը ճիշտ ընտրություն է սեփական անձը, ընտանիքն ու հասարակությունը պաշտպանելու համար:
* Պատվաստումը համավարակը դադարեցնելու ամենաարդյունավետ միջոցն է:

ՓԱՍՏԵՐՆ ՀԵՂԱԹՅՈՒՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

** Ասում են, իբր, Covid-19-ի պատվաստանյութը վտանգավոր է՝ չափազանց շտապ կարգով ստեղծելու պատճառով:*

COVID-19-ի համավարակը վտանգի տակ է դրել բազմաթիվ կյանքեր: Աննախադեպ չափով դրամահավաքի եւ միջազգային համագործակցության հիման վրա COVID-19-ի դեմ պատվաստանյութը ժամանակին անցավ անհրաժեշտ հետազոտությունները եւ ստեղծվեց անվտանգության բոլոր չափորոշիչներին համապատասխան:

** Ասում են, իբր, Covid-19-ի պատվաստանյութը անպտղություն է առաջացնում:*

Գոյություն չունի գիտական ապացույց, ըստ որի՝ կորոնավիրուսի դեմ որեւէ պատվաստանյութ կարող է բացասաբար ազդել կնոջ կամ տղամարդու պտղաբերության վրա:

** Ասում են, իբր, պատվաստանյութը կապ ունի 5G համացանցի հետ:*

Պատվաստանյութերի եւ համացանցի միջեւ չկա որեւէ կապ: Վիրուսները չեն տեղաշարժվում (չեն փոխանցվում) ռադիոալիքների եւ բջջային ցանցերի միջոցով: COVID-19-ը տարածվել է նաեւ այն երկրներում, որտեղ հասանելի չէ 5G ցանցը:

COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԱՆՎՏԱՆԳ Է

Պատվաստանյութը կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, սակայն դա ժամանակավոր է եւ շատ ավելի թեթեւ, քան COVID-19 կորոնավիրուսային հիվանդությունը:

Հնարավոր կողմնակի ազդեցություններն են ցավ՝ ներարկման տեղում, հոգնածություն, սարսուռ, մարմնի ջերմաստիճանի բարձրացում, սրտխառնոց, գլխացավ եւ այլն:

Նշված կողմնակի ազդեցությունները բնականոն են եւ նշանակում է, որ Ձեր օրգանիզմը իմունիտետ է մշակում:

Մեկ միլիոնից միայն եզակի դեպքերում են առաջանում ծանր, սուր ալերգիկ ռեակցիաներ, եւ համապատասխան կերպով պատրաստված բժշկական անձնակազմը կարող է այն լավ կառավարել:

Իմունիզացիայի պրովայդեր (մատակարար) բուժհաստատության անձնակազմը պատշաճ կերպով պատրաստված է ծանր ալերգիկ ռեակցիաները ժամանակին ախտորոշելու եւ շտապ միջոցներ ձեռնարկելու համար:

Պատվաստումը նվազեցնում է վարակման, հիվանդանալու եւ մահացության ռիսկը: Միացե'ք համընդհանուր պատվաստումների գործընթացին: Հոգ տանենք եւ միասին պաշտպանենք մեր եւ մեզ շրջապատող մարդկանց կյանքը:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե'ք՝ www.provax.ge:

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՏՎԱՍՏՎԵԼ ՆԵՐՔՈՆՇՅԱԼ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԺ ԳԻԾ

Ախալցիխեի «Էվեքսի հոսպիտալներ» ռեֆերալ հիվանդանոց, հասցե՝ Ռուսթավելու փող. 105ա
Ախալցիխեի «Իմեդի» կլինիկա, 514 417 417, (0365) 220 790, հասցե՝ Ախալքալաքիի խճուղի, նրբանցք 3
Ախալքալաքիի «Էվեքսի հոսպիտալներ» հիվանդանոց, հասցե՝ Աղմաշենեբելու փող. 31
Նինոծմինդայի «Էվեքսի կլինիկաներ» բուժհաստատություն, հասցե՝ Նինոծմինդա, Ազատության փող. 48
Բորժոմիի «Ջեո Հոսպիտալ» բազմապրոֆիլ բժշկական կենտրոն, (032) 2 505 222, հասցե՝ Մեսխեթիի 3
Ասպինձայի «Էվեքսի կլինիկաներ» բուժհաստատություն, հասցե՝ Շալվա Ախալցիխելու փող. 1ա
Ադիգենիի «Էվեքսի կլինիկաներ» բուժհաստատություն, հասցե՝ Բալախաշվիլու փող. 11

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նա էլ ընթերցեց պատգամավորների երդման տեքստը, որից հետո՝ բոլորը միասին երդվեցին:

Նորընտիր Ազգային ժողովի բացմանը ներկա էին եւ ելույթ ունեցան Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Իր խոսքում, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը առաջնահերթություն համարեց խորը եւ բազմաշերտ ճգնաժամից դուրս գալու ելքեր գտնելը, ինչի համար կարեւորեց պառակտումը բացառելը, շեշտեց նորընտիր ԱԺ-ին տրված հնարավորությունը՝ մշակելու, իրականացնելու ապագային միտված իրական, ռազմավարական ծրագրեր:

- Հայրենական կյանքում ծառացած հիմնախնդիրները հաղթահարելու համար պետական քաղաքական գործիչների եւ ողջ հասարակության համախմբումը, քաղաքացիական պատասխանատվության գիտակցումը հրամայական է: Բոլորիս ձգտումն է մեր Հայրենիքի առաջընթացն ու անվտանգությունը, խաղաղ, բարեկեցիկ կյանքը, որը մեծապես կախված է օրենսդիր մարմնի ու ձեւավորվող կառավարության գործունեությամբ,- իր խոսքում ասաց Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ընդգծելով, որ երկրում տիրող ծանր վիճակում, տարածաշրջանում առկա բարդ հանգամանքներում ատելության, վրեժխնդրության փոխարեն, կենսականորեն անհրաժեշտ են միասնությունն ու հանդարտությունը, հուզումների ու լարվածության թոթափումը:

Ազգային ժողովի անդրանիկ նիստում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ներկայացված Նիկոլ Փաշինյանը պատգամավորների ձայների մեծամասնությամբ ընտրվեց Հայաստանի վարչապետ:

Հիշեցնենք, որ նորընտիր խորհրդարանում ներկայացված է 3 քաղաքական ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» դաշինքները:

Խորհրդարանում ներկայացված է ընդհանուր 107 պատգամավոր:

Օգոստոսի 2-ին, ութերորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստում անցկացված քվեարկությունից հետո, Հայաստանի նախագահի հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվեց Հայաստանի վարչապետ:

Նշենք, որ Նիկոլ Փաշինյանը վարչապետի պաշտոնից հրաժարական էր ներկայացրել 2021 թվականի ապրիլի 25-ին՝ տալով Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների գործընթացի մեկնարկը: Հրաժարականից հետո Նիկոլ Փաշինյանը կատարում էր Հայաստանի վարչապետի պաշտոնակատարի պարտականությունները:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ, ԻՍԿ ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆԸ՝ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Օգոստոսի 2-ին, Ութերորդ գումարման Ազգային ժողովը երկրորդ անգամ փակ գաղտնի քվեարկությամբ ԱԺ նախագահ ընտրեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված Ալեն Սիմոնյանին:

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆ

Քվեարկությանը մասնակցել է 71 պատգամավոր: Ալեն Սիմոնյանը ստացել է 71 ձայն:

«Հայաստան» խմբակցության թեկնածու Մխիթար Զաքարյանը եւ «Պատիվ ունեմ»-ի թեկնածու Արթուր Սարգսյանը ձայներ չէին ստացել: Ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները չեն մասնակցել քվեարկությանը:

Օգոստոսի 3-ին խորհրդարանը փակ գաղտնի քվեարկությամբ ԱԺ փոխնախագահի պաշտոնում ընտրեց Ռուբեն Ռուբինյանին: Նրա թեկնածությունն առաջադրել էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը:

Քվեարկությանը մասնակցել է 70 պատգամավոր, որոնք բոլորն էլ կողմ են քվեարկել Ռուբինյանի թեկնածությանը:

ԱԺ նախագահի մյուս տեղակալի համար ՔՊ-ի թեկնածուն Հակոբ Արշակյանն է: ԱԺ նախագահի երրորդ տեղակալի պաշտոնի համար ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունն առաջադրել է Իշխան Սաղաթելյանի թեկնածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԻՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Օգոստոսի 5-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Իրանի նորընտիր նախագահ էբրահիմ Ռայիսիի երդման արարողությանը մասնակցելու նպատակով, աշխատանքային այցով գտնվում էր Իրանում:

Թեհրանի «Մեհրաբադ» օդանավակայանում դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, վարչապետն ուղեւորվեց Իրանի նախագահի նստավայր, որտեղ նրան դիմավորեց Իրանի նորընտիր նախագահ էբրահիմ Ռայիսին:

Հայաստանի եւ Իրանի ղեկավարները քննարկեցին առեւտրատնտեսական կապերի ամրապնդմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, զրուցակիցներն այս ոլորտում փոխգործակցությունը զարգացնելու խթան են համարել Մեղրիի ազատ տնտեսական գոտու ակտիվ գործունեության ապահովումն ու ԵԱՏՄ-ի հետ Իրանի ազատ առեւտրի ռեժիմի կիրառման հնարավորությունը:

Կողմերն առաջնային համարեցին տարածաշրջանային կապուղիների զարգացումը, որտեղ առանցքային նշանակություն կունենա Պարսից ծոցից Սեւ ծով տրանսպորտային եւ մալուխային կապի զարգացումը:

Նիկոլ Փաշինյանը եւ էբրահիմ Ռայիսին անդրադարձան նաեւ էներգետիկայի ոլորտում համագործակցության զարգացման հնարավորություններին:

Կառավարության ղեկավարը կարեւորել է տարածաշրջանում խաղաղություն եւ կայունություն հաստատելու ուղղությամբ Իրանի գործադրած հետեւողական ջանքերը:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ «ՍՓՅՈՒՌՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՍՊԱՆ» ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի հայտարարությամբ, իր գլխավորած գրասենյակը սեպտեմբերին իրականացնելու է «Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագիրը: - Այս ծրագիրն իրականացվելու է առաջին անգամ: Ընտրական փուլն արդեն անցել է, այժմ սպասում ենք մեկնարկին,- նշեց Սինանյանը:

Ծրագրի նպատակն է՝ աջակցել Սփյուռքի այն երիտասարդներին, որոնք ներգրավված են Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործընթացներում, եւ աշխատանքներ են տանում համայնքային կյանքի ակտիվացման, հայկական շահերի պաշտպանության ուղղությամբ, ինչպես նաեւ ձեւավորել հայ երիտասարդների դինամիկ ցանց, որը կունենա աշխարհի տարբեր համայնքներից սփյուռքահայ երիտասարդների ընդլայնված ներկայացվածություն:

«Սփյուռքի երիտասարդ դեսպան»-ը մեկամյա է: Այն ունի տեսական եւ գործնական բնույթ. ներառում է մի շարք դասախոսություններ, աշխատաժամեր, հանդիպումներ, որոնք հնարավորություն կտան մասնակիցներին ձեռք բերել գիտելիքներ Հայաստանի քաղաքական, սոցիալական, տնտեսական հրատապ խնդիրների մասին, միաժամանակ ընդլայնել իրենց պատկերացումները համայնքային կյանքում ներգրավվածության եւ հայկական շահերի պաշտպանության հարցերում: Երիտասարդները կայցելեն Հայաստանի պատմական, մշակութային եւ հիշատակի վայրեր, կրթական, գիտական, տեխնոլոգիական ինստիտուտներ, նաեւ կմասնակցեն հասարակական, մշակութային միջոցառումների եւ կամավորական աշխատանքների:

ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, հիմք ընդունելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությունները, ստորագրել է երկրի նոր նախարարների նշանակման հրամանագիրը: Ըստ այդմ՝ Արշակ Կարապետյան՝ պաշտպանության նախարար, Նարեկ Մկրտչյան՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերով նախարար, Գնել Սանոսյան՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար, Տիգրան Խաչատրյան՝ ֆինանսների նախարար, Վահան Քերոբյան՝ էկոնոմիկայի նախարար, Կարեն Անդրեասյան՝ արդարադատության նախարար, Անդրանիկ Փիլոյան՝ արտակարգ իրավիճակների նախարար, Անահիտ Ավանեսյան՝ առողջապահության նախարար, Վահրամ Դումանյան՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար, Վահագն Խաչատուրյան՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար: Նախագահի հրամանագրով Սուրեն Պապիկյանը, Մհեր Գրիգորյանը նշանակվել են փոխվարչապետի պաշտոնում:

200 ՀԱԶԱՐ ՉԱՓԱԲԱԺԻՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Օգոստոսի 3-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Ֆրանսիայի նախագահը Նիկոլ Փաշինյանին շնորհավորել է ՀՀ վարչապետի պաշտոնին նշանակվելու կապակցությամբ եւ բարձր գնահատել երկրում ժողովրդավարական գործընթացների անխափան իրականացումը: Ֆրանսիայի նախագահը հայտնել է Հայաստանին 200 հազար չափաբաժին պատվաստանյութ տրամադրելու որոշման մասին: Վարչապետ Փաշինյանը նախագահ Մակրոնին իր երախտագիտությունն է հայտնել այս առիթով:

Հեռախոսազրույցին կողմերը մտքեր փոխանակեցին ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով Մինսկի խմբի առաքելության վերաբերյալ: Ֆրանսիայի նախագահը վերահաստատել է իր պատրաստակամությունը՝ շարունակելու հետեւողական ջանքեր գործադրել տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման ուղղությամբ:

ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակին պատրաստվածության մակարդակի բարձրացում. կորոնավիրուսից առաջացող սպառնալիքի հայտնաբերում եւ արձագանքում» ծրագրի ֆինանսավորման համար դրամաշնորհի տրամադրման մասին Հայաստանի եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ համաձայնագրի ստորագրման առաջարկությանը:

Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանին տրամադրել 3 մլն դոլարի դրամաշնորհ, որն ուղղվելու է առողջապահական համակարգի հզորացմանը, արդիականացմանը:

Այս դրամաշնորհի շրջանակներում նախատեսվում է Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնների երկու մարզային կենտրոնների՝ Արարատի ու Արմավիրի, մասնաճյուղերի ամբողջական վերազինում եւ Վանաձորի ԲԿ-ին կից ինֆեկցիոն նոր մասնաշենքի կառուցում ու համալրում: Սա շատ կարեւոր նախաձեռնություն է: Սրա շրջանակներում երկիրը կունենա Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնների ազգային ցանց:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

2.08.2021 Սուրբ Վահան Գողթնեցու հիշատակության օր

3.08.2021 Սուրբ Եվգինե կույսի, նրա հոր Փիլիպպոսի եւ մոր Կղոդիայի, երկու եղբայրների՝ Սերգեյի եւ Ապիտոնի, երկու ներքինիների հիշատակության օր

7.08.2021 Եփեսոսի Սուրբ Ժողովի 200 հայրապետների հիշատակության օր

8.08.2021 Բարեկենդան Սուրբ Աստվածածնի պահոց

Պահքի սկիզբն է, որը նախորդում է Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներից եւ Սուրբ Աստվածածնին նվիրված տոներից մեկին, այսինքն՝ Սուրբ Աստվածածնի վերափոխմանը: Այս պահքը տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

14.08.2021 Տոն Շողակաթի՝ Սուրբ Էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի

ԵՐԿԱԹԳԻԾ

Ե'Վ ԷԺԱՆ, Ե'Վ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ. ԿԳՈՐԾԱՐԿՎԻ ԷԼԵԿՏՐԱԳՆԱՑՔ ԵՐԵՎԱՆ-ԹԲԻԼԻՍԻ ԵՐԹՈՒՂՈՎ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն («Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի դուստր ընկերությունը) վրացի գործընկերների հետ քննարկում է Երեւան-Թբիլիսի էլեկտրագնացքի գործարկման գաղափարը:

Նախնական հաշվարկներով՝ ճանապարհը կարող է տեւել 6-7 ժամ: ՀԿԵ գլխավոր տնօրենը նաեւ հայտնել է, որ մի քանի օրից երկու նոր էլեկտրագնացքներ կհանձնվեն ընկերությանը: Այժմ նրանք բեռվում են «Կովկաս» նավահանգստում:

Ուղեւորների առավելագույն հարմարավետության համար ընկերությունը պատրաստ է Գյումրու օդանավակայանի հետ քննարկել չվացուցակները համաձայնեցնելու հարցը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի դուստր ընկերությունն է եւ իրականացնում է հայկական երկաթուղիների կոնցեսիոն կառավարումը:

ՏՈԿԻՈ - 2020

ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՌԵԿՈՐԴԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՊԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՍԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԸ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ԱՎԱՐՏԵՑ ԵՐԿՈՒ ԱՐԾԱԹԵ ԵՎ ԵՐԿՈՒ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Եզրագծին են մոտենում Տոկիոյի 32-րդ Օլիմպիական խաղերը: Մարզական փառատոնի ավարտից երկու օր առաջ՝ Վրաստանի հավաքականն իր ակտիվում ունի երկու ոսկե, հինգ արծաթե եւ մեկ բրոնզե մեդալներ:

Երկրի հավաքականի գանձարկղում երկրորդ ոսկե մեդալը նվաճեց ծանրորդ, Ռիոյի օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն, ռեկորդակիր Լաշա Տալախաձեն (+109կգ քաշային կարգ): Մրցաշարում աչքի ընկավ եւս մեկ վրաց ծանրորդ՝ Անտոն Պլեսնոյը (96կգ) նվաճեց բրոնզե մեդալ:

Երկրի հավաքականի ակտիվում երկուական արծաթե մեդալներ գրանցեցին ըմբշամարտիկներ Գենո Պետրիաշվիլին (ազատ ոճ, 125կգ) եւ Յակոբ Քաջաիան (հունա-հռոմեական ոճ, 130կգ):

Հայաստանի հավաքականը օլիմպիական մրցաշարին իր մասնակցությունն ավարտեց՝ ակտիվում գրանցելով երկու արծաթե եւ երկու բրոնզե մեդալ: Օլիմպիական խաղերի փոխչեմպիոններ դարձան ծանրորդ Սիմոն Մարտիրոսյանը եւ հունա-հռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը:

Բրոնզե մեդալ նվաճեց Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամ Արթուր Դավթյանը:

Օլիմպիական խաղերում բրոնզե մեդալակիր դարձավ Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ Հովհաննես Բաչկովը:

Օգոստոսի 7-ի դրությամբ, Վրաստանի հավաքականը Օլիմպիական խաղերի մեդալների ոչ պաշտոնական հաշվարկում 26-րդն է, իսկ Հայաստանի թիմը՝ 67-րդը: Այդ վարկանիշով աղյուսակի առաջին տասնյակում են Չինաստանը, ԱՄՆ, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանի Օլիմպիական կոմիտեն, Ավստրալիան, Իտալիան, Գերմանիան, Նիդերլանդներն ու Ֆրանսիան:

Օլիմպիական խաղերի փակման պաշտոնական արարողությունը կկայանա օգոստոսի 8-ին:

ՖՈՒՏԲՈԼ

ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ֆուտբոլի եվրոպական գավաթների խաղարկության մրցաշարերում պայքարը շարունակում են Բաթումիի «Դինամոն» եւ Երեւանի «Ալաշկերտը»:

Բաթումիի դինամոյականները, Կոնֆերենցիաների լիգայի երրորդ ընտրական փուլի շրջանակներում, սեփական հարկի տակ ընդունեցին թուրքական «Սիվասսպոր» եւ պարտվեցին 1:2 հաշվով:

Երեւանի «Ալաշկերտը», Եվրոպայի լիգայի երրորդ ընտրական փուլի շրջանակներում Ալմաթիում իր ուժերը չափեց տեղի Կայրաթի հետ: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 0:0:

Պատասխան երկու հանդիպումները՝ օգոստոսի 12-ին:

Թբիլիսիի 104-րդ հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես ցավակցում են էդուարդ Հակոբյանին եւ Հրաչիկ Ներսիսյանին, եղբոր եւ քեռու՝

Դուրմիշխան Գալուստի ՀԱԿՈԲՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի ընտանիքին, հարազատներին ու մերձավորներին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ուխտյալ: 9.Ոգեւորիչ: 10.Հանքային կամ օրգանական նյութերից առաջացած նստվածք ջրերի հատակին: 11.Շահավետ, օգտակար: 13.Տիրապետում, կառավարում: 16.Կաթնամթերք: 17.Քաղաք Ֆրանսիայում: 19.Հայկական գինի: 22.Քաղաք Ֆրանսիայի հարավ-արեւելքում՝ Միջերկրական ծովի ափին: 24.Ակվարիումային ձուկ: 25.Մեկը մյուսին: 27.Քաղաք Ռուսաստանում: 29.Վիճահարույց: 32.Թբիլիսիում գործող կինոթատրոն: 33.Մարզկենտրոն ՌԴ-ում: 35.Իտալացի կինոդերասանուհի Մոնիկա ...: 37.Հայկական հեռուստաալիք: 39.Բիշքեկում գտնվող ամերիկյան ավիաբազա (Ղրղզստան): 40.Սապոն: 43.Ամերիկյան դերասանուհի ... Գարդներ: 44.Հասարակական-քաղաքական որոշ տրամադրությունների արտահայտությունը հանդիսացող մասսայական երթ: 47.Վախից, երկյուղից (ժող.): 49.Համով, ախորժելի համ ունեցող: 50.Զգոն: 53.Լիճ պատմական Հայաստանում: 54.Հայտնի պարսիկ ծաղրանկարիչ ... Դիվանդարի: 55.Աղջիկը իր ծնողների մյուս երեխաների համար: 57.Բույր: 58.Նմանակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մետաղ: 2.Ֆրանսիացի դիզայներ, համարվում է նորաձեւության պատմության ամենանշանավոր դեմքերից մեկը՝ ... Լորեն: 3.Կտոր, մաս: 4.Գյուղ Վրաստանում, Կասպիի մունիցիպալիտետում: 5.Եզդի ցեղապետ: 6.Հեթանոսական կրոնի սպասավոր՝ քահանա: 8.Գոյություն ունենալ: 12.Դիմում: 14.Սալոր: 15.Կրթություն, գիտելիք: 18.Սկեսրոջ «աղջիկը»: 19.Գետ Ռուսաստանում: 20.Լեւ Տոլստոյ, «Աննա ...»: 21.Երգիչ ... Մարտին: 23.Շնականություն, անամոթություն: 26.Ռումբ: 28.Չթից կարված: 29.Պարանոց: 30.Կղզի Ինդոնեզիայում: 31.Արեւելյան ծագումով հնագույն հարվածային երաժշտական գործիք: 34.Ալպիական: 36.Հիսուսը իսլամում: 38.Միապետի տիտղոս Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում: 41.Գլխին մազ չունեցող: 42.Կիեւյան ...: 45.Խոշոր քաղաք Չինաստանում: 46.Մինչեւ կյանքի վերջը: 48.Բանգլադեշի մայրաքաղաքը: 51.Էտապ: 52.Խոշոր երգեհոն: 56.Լեհ գրող Հենրիկ Սենկեւիչի պատմավեպ՝ «... երթաս»:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Թանկյան: 5.Գաբրիել: 8.Բալետ: 9.Ուլյանով: 11.Դեա: 12.Նվագ: 14.Վերսալ: 15.Ավար: 16.Ան: 17.Քաոս: 19.Սվան: 22.Աջ: 24.Այտ: 26.Մերի: 27.Ուսամա: 29.Կաունաս: 31.Ալամ: 32.Նյու: 33.Տաք: 35.Իրաք: 37.Ռե: 39.Գազա: 40.Սե: 41.Զառ: 43.Սա: 44.Նար: 45.Ատ: 46.Դրափե: 47.Դի: 49.Ավել: 50.Անա: 54.Շահանե: 56.Որդի: 59.Ենոտ: 60.Ասք: 61.Նարե:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թեոդոսիա: 2.Նրբանցք: 3.Յալթա: 4.Նատո: 5.Գյուլեր: 6.Բրյուսով: 7.Լավրենտի: 10.Նալ: 13.Գասպար: 14.Վասակ: 18.Արամազդ: 19.Ստույգ: 20.Ամա: 21.Նեստան: 23.Ջուլիետ: 25.Յան: 28.Սար: 30.Նուարդ: 34.Քորելի: 36.Քարշ: 38.Եսենին: 40.Սավանե: 42.Ռա: 48.Իա: 51.Աշտե: 52.Օհան: 53.Իորի: 55.Երե: 57.Դա: 58.Իսկ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՅՈՆ ՄՈՆԱՅԱՐՄՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԲՈՆԵԼԻՆ ՀՈՒՅՍ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445